The European Law Students' Association
ELSA ARMENIA

ԸՆԴԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Դատախաղի կառուցվածքը

1.1. Սույն դատախաղը բաղկացած է 2 փուլից՝ գրավոր փուլ և բանավոր փուլ:

1.2. Թիմերը պետք է ներկայացնեն երկու գրավոր դիրքորոշում՝ դիմումատուի և կառավարության անունից

1.3. Աշխատանքային լեզուն հայերենն է:

2. Փաստաթղթեր

2.1. Գործը

2.1.1. Դատական գործի նմուշը կազմվել է Եվրոպայի իրավաբան ուսանողների ասոցիացիայի միջազգային խորհրդի և «Եվրոպայի իրավաբան ուսանողների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի համագործակցությամբ: Գործը պարունակում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների ենթադրյալ խախտումներ:

2.1.2. Գրավոր և բանավոր փուլերի կազմակերպման և անցկացման վերաբերյալ ընթացակարգային կանոնները կիրապարակվեն դատախաղին մասնակցության հայտ ներկայացրած թիմերի համար:

2.2 Պարզաբանման ենթակա հարցեր

2.2.1. Մինչև գրավոր դիրքորոշումների ներկայացման վերջնաժամկետը թիմերը կարող են ներկայացնել պարզաբանման ենթակա հարցեր:

2.2.2. Գործի հեղինակն առանց պատճառաբանական հիմնավորման կարող է հրաժարվել պատասխանել թիմի ներկայացրած պարզաբանման ենթակա հարցերին, եթե դրանք ողջամիտ, վերաբերելի կամ տրամաբանական չեն:

2.2.3. Պարզաբանման ենթակա հարցի պատասխանը հասանելի է լինելու բոլոր թիմերի համար:

3. Թիմերը

3.1. Թիմ կազմելու հնարավորությունը

3.1.1. Սույն դատախաղին իրավասու են մասնակցել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավագիտության կրթական ծրագիր ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունները: Եթե վերոնշյալ չափանիշներին համապատասխանող բուհն ունի մասնաճյուղ, ապա վերջինս կարող է մասնակցել դատախաղին ինքնուրույնաբար՝ ներկայացնելով տվյալ մասնաճյուղը:

3.1.2. Յուրաքանչյուր բուհից կարող է մասնակցել մեկ թիմ: Միևնույն բուհից մեկից ավելի թիմերի հայտարարագրման դեպքում Եվրոպայի իրավաբան ուսանողների խորհրդի հայկական ասոցիացիան կապ կհաստատի տվյալ բուհի հետ, որն էլ 5 աշխատանքային օրվա ընթացքում կընտրի մեկ մասնակից թիմ: Եթե բուհը չկատարի ընտրություն կամ սահմանված ժամկետում և կարգով չիրազեկի Եվրոպայի իրավաբան ուսանողների խորհրդի հայկական ասոցիացիային իր ընտրության մասին, ապա կմասնակցի առաջին հայտարարագրված թիմը:

3.1.3. Թիմի բոլոր անդամները պետք է լինեն նույն բուհից:

3.2. Թիմի անդամ լինելու չափանիշները

3.2.1. Ուսանողները կարող են մասնակցել դատախաղին, եթե

ա. հայտերի ներկայացման պահին բակալավրիատի 3-րդ կամ 4-րդ կուրսի կամ (սույն սահմանափակումը չի վերաբերում պահեստային անդամին), մագիստրոսական կրթական ծրագրի ուսանող են

բ. ներգրավված չեն սույն դատախաղի կազմակերպչական աշխատանքներում:

3.3. Թիմի կառուցվածքը

3.3.1. Թիմի կազմում պետք է լինեն 3-5 ուսանող:

3.3.2. Թիմային կազմի ցանկացած փոփոխության մասին պետք է տեղեկացվի Եվրոպայի իրավաբան ուսանողների հայկական ասոցիացիան: Գրավոր դիրքորոշումները ուղարկելուց հետո թիմերը չեն կարող փոխել իրենց կազմը:

3.3.3. Հաշվի առնելով թիմի անդամի լրացման անհրաժեշտությունը 3.3.2. կետում սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 3 անդամից բաղկացած թիմը կարող է ունենալ մեկ պահեստային անդամ: Պահեստային անդամը թիմի հիմնական անդամի լրացման անհրաժեշտության դեպքում ապահովում է թիմի գոյության քանակական նախապայմանը (տես 3.3.1. կետը), և չի կարող մասնակցել դատախաղին, մինչև թիմի անդամների լրացման անհրաժեշտությունը: Հիմնական և պահեստային անդամների դերափոխանակումն արգելվում է: Պահեստային անդամը պետք է համապատասխանի հիմնական անդամին առաջադրված չափանիշներին՝ հաշվի առնելով 3.2.1-ի «ա» կետում սահմանված բացառությունը: 3 անդամից բաղկացած թիմն է կրում պահեստային անդամ չունենալու ռիսկերը:

3.4. Մարզիչներ

3.4.1. Թիմը կարող է ունենալ մեկ մարզիչ, որը չպետք է ներգրավված լինի սույն դատախաղի կազմակերպչական աշխատանքներում

3.4.2. Մարզիչը կարող է օգնել թիմին գործի ընդհանուր քննարկումների, լեզվական ոճի և ներկայացման հմտությունների բարելավման հարցում: Մարզիչը չպետք է իր դիտողություններով գործուն մասնակցություն ունենա գործում առկա իրավական խնդրի վերլուծման գործընթացում:

4. Գաղտնիությունը

4.1 Դատախաղ-մրցույթի ամբողջ ընթացքում թիմերը չպետք է բացահայտեն դատավորներին, թե որ բարձրագույն ուսումնական հաստատությունն են ներկայացնում:

4.2 Մասնակցության հայտերի գրանցումից հետո յուրաքանչյուր թիմի տրվելու է նույնականացման համար, որն օգտագործվելու է ամբողջ մրցույթի ընթացքում: